



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԼՈՐԻ ԱՐԶՆԵՑ

✉ ք. Վանաձոր, Հայ քի Հրապարակ 1

☎ 4-61-92

Fax 2-07-70

թիվ \_\_\_\_\_

<<\_\_\_\_>> \_\_\_\_\_ 2018 թ.

«Խարույկ» ակումբ ՀԿ-ի  
անդամ պարոն Ն. Խառատյանին

Ձեր 11.11.2018 թ. դիմումին

Տրամադրում եմ, 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ 2013 թվականի հունիսի 19-ի «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխություններից հետո ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստացած, սակայն կառուցման փուլում գտնվող փոքր հիդրոէլեկտրակայանների ցուցանիշները, որոնք վերցված են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային կայքից (<http://www.psrc.am/am/sectors/electric/license-companies>):

Տեղեկացնում եմ նաև, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումների ծրագիր-

Ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 836-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ կետով նախատեսվում է Դեբեդ գետի ավազանում «Շնող» ՀԷԿ-ի (75-ից մինչև 100 ՄՎտ հզորությամբ) կառուցում, հիդրոէներգետիկ ներուժի յուրացում, շուրջ 300-ից մինչև 400 մլն կՎտ.ժ էլեկտրաէներգիայի արտադրություն, թողարկումը 2023 թվականին, սակայն գործնական որևէ առաջարկություն կամ ծրագիր առայժմ քննարկման չի ներկայացված: 2018 թվականի հունիսի 8-ի թիվ 46-Ա որոշմամբ Ալավերդի համայնքի ավազանին ուղերձով դիմել է ՀՀ վարչապետին, խնդրելով միջոցներ ձեռնարկել չեղարկելու «Շնող» ՀԷԿ-ի կառուցումը:

Հայտնում եմ նաև, որ ՇՄԱԳ փորձաքննություն իրականացնում է պետական լիազոր մարմինը: Լոռու մարզպետարանը ՇՄԱԳ հետազոտություն չի իրականացնում, իսկ ազդակիր համայնքներում կատարված լսումների արձանագրությունները պահպանվում են համայնքներում՝ տեղական ինքնակառավարման մարմինների նստավայրերում, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ներկայացվում են ՀՀ բնապահպանության նախարարություն: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված է, որ համայնքի վարչական տարածքում շինարարության թույլտվություն տալիս է տվյալ համայնքի ղեկավարը իր որոշմամբ:

Առդիր՝ 1 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

X

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ